

ALTER

Alliance for Disaster Risk Reduction

Հայաստանում Եվրոմիության «Աղետների ռիսկի նվազեցման դաշինք» (ALTER) ծրագիր



Funded by
European Union
Civil Protection

«Աղետների ռիսկի նվազեցման դաշինք» (ALTER) ծրագրի ԱՌՆԱՊ աշխատանքային փաթեթ

Ծրագրի նպատակը

Բարձրացնել Հայաստանի տեղական համայնքների դիմակայունությունն աղետների նկատմամբ պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ձևավորման, ինչպես նաև աղետների ռիսկի կառավարման համայնքային պլանավորման և իրականացման ժամանակակից գործընթացների և տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

Հիմնական վտանգը. Երկրաշարժի հետևանքով առաջացած ջրհեղեղը;

Աշխատանքային փաթեթը

- Պետություն-մասնավոր գործընկերություն՝ ուղղված համայնքների դիմակայունության բարձրացմանը
- Տեղական համայնքների դիմակայունության բարձրացման միջոցառումներ / գործընթացներ.

սեյսմիկ մոնիթորինգի կայանների տեղադրում

ուսումնաշտաբային վարժանքներ

ուսումնական նախավարժանքներ

դաշտային վարժանքներ:

Շահառու համայնքերն են. Սիսիան և Կապան համայնքներ. Սիսիան քաղաք, Շաղատ, Բալաք, Ոյժ և Որոտնավան բնակավայրեր, Ախթալա համայնք

Թիրախ օբյեկտներն են. Սպանդարյանի և Գեղիի ջրամբարներ, Արծվանիկ, Գեղանուշի և Նահատակ պոչամբարները:

Իրականացված գործողությունները և գործընթացները

- Ուսումնասիրվել են ծրագրի պիլոտային տարածքների՝ շահառու համայնքների, թիրախ օբյեկտների վերաբերյալ համապատասխան նյութերը Հստակեցվել են պիլոտային համայնքներին վերաբերող՝ ԱՌԿ ոլորտին առնչվող ինդիկատորն ու առաձևահատկությունները:
- Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) համատեքստում ուսումնասիրվել և քննարկվել են բնակչության պաշտպանության / ԱՌԿ ոլորտին առնչվող հնարավոր ձևաչափերի և մեխանիզմների մշակման և ներդրման հարցերը.
- ԱՌՆԱՊ կողմից իրականացվել են առաջնային մի շարք գործողումներ պիլոտային տարածքներ. ՏԻՄ / բնակավայրերի վարչական ղեկավարների հետ ծրագրի և իրականացման քայլերի քննարում, այց. թիրախ օբյեկտներ.
- 2018թ. հունիսին ALTER ծրագրի ամբողջ թիմի կողմից իրականացվել են ճանաչողական և հետազոտական նպատակ ունեցող այցերը պիլոտային տարածքներ: Հանդիպումներ ՏԻՄ, մասնավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ և այցելություն թիրախ օբյեկտները: Սեյսմիկ մոնիթորինգի կայանների հնարավոր տեղադրման հարցը թիրախ օբյեկտներից որևէ մեկի պատնեշի վրա քննարկվել է բոլոր մասնավոր ընկերությունների հետ: Արդյունքում՝ նպատակահարմար է համարվել տեղադրել Գեղիի ջրամբարի վրա:
- Ծրագրով սահմանված՝ ձեռք են բերվել 4 սեյսմիկ մոնիթորինգի կայաններ և տեղադրվել են Գեղիի ջրամբարի վրա: ՉՊՄԿ, ԱԻՆ և ԱՌՆԱՊ միջև հետ կնքվել է Համագործակցության պայմանագիր Գեղիի ջրամբարի պատնեշի վրա սեյսմիկ մոնիթորինգի համակարգի տեղադրկման և Կապան համայնքի բնակչության ազդարարման նպատակով:

Պետություն-մասնավոր համատեքստում ընթացիկ՝ վերհանված խնդիրները

- Մասնավոր ընկերությունների արտակարգ իրավիճակներին արձագանքելու պլանները (եթե առկա են) պետք է փոխկապակցվեն համայնքային արտակարգ իրավիճակներում գործելու պլանների հետ: Համայնքային ԱՌԿ պլանների մշակման / ներդրման ընթացող գործընթացներին մասնավորի ներգրավումը պահանջված է: Մեխանիզմների մշակման խնդիր կա:
- Մասնավոր ընկերությունների կողմից համայնքներին տրամադրվող սոցիալական ներդրումները պետք է ներառեն դիմակայունության / ԱՌԿ բաղադրիչը: Հանքարդյունաբերության ոլորտի մասնավոր ձեռնարկատիրական գործունեությունը թեև նախատեսում և իրականացնում է սոցիալական ոլորտը խթանող միջոցառումներ, սակայն սոցիալական վեկտորը ուղղակի կերպով չի ներառում դիմակայունությանը / ԱՌԿ բաղադրիչը: Անհրաժեշտ է վերանայել սոցիալական վեկտորով սահմանված ներդրումների ուղղվածությունը և համայնքին տրամադրվող մասհանումների որոշակի հատվածի ուղղորդումը ԱՌԿ ոլորտային խնդիրների լուծմանը:

Հարկավոր են համապատասխան օրենսդրական փոփոխություններ պետություն-մասնավոր գործընկերության հայեցակարգում:

.

Շտաբային ուսումնավարժանքներ, նախավարժանքներ / ուսուցում և դաշտային վարժանքներ

- Բնակչության պատրաստվածությունը բավարար մակարդակի վրա չէ,
- Բնակչության պաշտպանության պատասխանատուների / ծառայությունների փոխկապակցված գործողություններն ու քայլերի հաջորդականությունը համաձայն ստեղծված իրատեսական իրավիճակի տեսականորեն հստակ ձևակերպված են, սակայն պարբերական գործնական կիրարկման անհրաժեշտություն կա
- Բնակչության իրազեկում.
- Կարիք կա մեխանիզմների հստակեցման, բոլոր մակարդակներում ուսուցման և վերապատրաստման պարբերականության ապահովման,
- բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության խնդիրների հստակ տարանջատում (քաղ. ազդարարումը և արտակարգ իրավիճակի ազդարարումը նաև հետագա անելիքները հաճախ նույնականացվում են)
- տարահանում. շենք/շինություն-անվտանգ միջավայր/մուտք/ելք/ անվտանգ տարածք
- Ազդարարում – տարահանում. համայնքային մակարդակում պարբերական խաղարկման անհրաժեշտություն կա բոլոր դերակատարների և հնարավոր ռեսուրսների ներգրավմամբ , մասնավորապես քարտեզագրված տարահանման անվտանգ ուղիների պարբերական վերանայման
- ՏԻՄ - մասնավոր համագործակցություն. ԱՌԿ ոլորտին վերաբերող խնդիրների համատեղ դասակարգման հստակ խնդիր կա. մասնավոր ընկերությունների կողմից համայնքին սոցիալական վեկտորով պայմանավորված մասհանումներից աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներին հնարավոր տրամադրումների պլանավորում:
- Համայնքը, հնարավորի սահմաններում, ինքնուրույն պետք է ապահովի բնակչության տարահանումը և պաշտպանությունը, մինչև լրացուցիչ ուժերի օժանդակությունը:

